

Հարգելի գործընկերներ, ողջունում եմ Ձեզ,

Շնորհակալություն եմ հայտնում այս կարևոր միջոցառմանը մեզ մասնակից դարձնելու և խոսքի հնարավորության համար: Առիթն օտագործելով՝ ՀՀ Տավուշի մարզպետի և մեր մարզային թիմի անունից ուզում եմ շնորհակալություն հայտնել մեր բոլոր գործընկերներին՝ ՀՀ Առողջապահության նախարար պարոն Դ. Դումանյանին, ՀՀ Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարար պարոն Ա. Ասատրյանին, <Արաբկիր> բժշկական համալիր-Երեխաների և դեռահասների առողջության ինստիտուտի գիտական ղեկավար, ՀՀ ԱԺ պատգամավոր՝ պարոն Ա. Բաբլոյանին, <Առաքելություն Արևելք> կազմակերպության գլխավոր տնօրեն պարոն Կիմ Հարցներին, <Առաքելություն Արևելք> կազմակերպության հայաստանյան գրասենյակի տնօրեն պարոն Րաֆֆի Դուդակյանին, <Հույսի կամուրջ> ՀԿ տնօրեն տիկին Ս. Թադևոսյանին և Ձեր թիմերին, որոնց հետ անձամբ առիթ եմ ունեցել աշխատելու և բոլորից զգացել հոգատարություն ու հավատ մեր առջև դրված նպատակներին հասնելու գործում:

<Առողջ սկիզբ> ծրագրի շրջանակներում Տավուշի մարզում իրականացված աշխատանքները շատ կարևոր են բոլորիս համար և միասին կարողացանք անցած երկու տարիների ընթացքում ձեռք բերել կարողություններ, ձեռք բերել փորձ, որը մեր կարծիքով կարելի է որպես հաջողված օրինակ կիրառել նաև այլ տարածաշրջաններում :

Ծրագիրը ՀՀ Տավուշի մարզում իրականացվեց 2011-12 թվականներին <Հույսի կամուրջ> ՀԿ-ի կողմից բոլոր 62 համայնքներում :

Մեր համատեղ աշխատանքը տվեց դրական մի շարք արդյունքներ, որոնցից ամենահիմնականը հետևյալն է՝

- Հաշմանդամություն և կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաները վաղ հայտնաբերվում ու սոցիալապես ներառվում են
- Համայնքային աջակցության խմբերը հզորացել են
- Ծնողական փոխոգնության խմբերը կայացել ու զարգացել են
- Հաշմանդամություն ունեցող անձանց շահերը պաշտպանվում են

‘Առողջ սկիզբ’ ծրագրի շրջանակներում ներդրվեց համապարփակ, ներառական ծառայությունների մոդել, որով հաշմանդամություն և կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաներին և նրանց ընտանիքներին մատուցվող ծառայությունները դառնում են համայնքահեն և մոտ ընտանիքին:

Ծրագիրը ներդրել է կայուն և ուժեղ համագործակցության հիմքեր համայնքային և մարզային կառույցների միջև: Տավուշի մարզի 62 համայնքներում ստեղծվել են <Ընտանիքի և երեխայի աջակցության կենտրոններ>, որոնք ծառայություններ են մատուցում համայնքի կյանքի դժվարին իրավիճակներում գտնվող երեխաներին ու նրանց ընտանիքներին: Ստեղծվել են համայնքային աջակցության խմբեր, որտեղ ներգրավված են համայնքի կրթության, առողջապահության համայնքային հարցերով պատասխանատու անձինք, հաշմանդամություն ունեցող երեխաների ծնողներ: Համայնքային աջակցության խմբերի պարբերական հանդիպումները օգնում են երեխաների մասին ինֆորմացիայի փոխանակմանը և տեղում լուծվում են այդ խնդիրները: Ստեղծվել են երիտասարդ հաշմանդամների ակտիվ խմբեր, որտեղ ներգրավված են ավելի քան 546 երիտասարդներ, որոնք կամավորական սկզբունքով կազմակերպում են հանդիպումներ, բանավեճեր, իրականացնում են բարության դասեր դպրոցներում, գործընթացներում ցուցաբերում են ակտիվ մասնակցություն:

Ընտանիքի և երեխայի աջակցության կենտրոնը հանդիսանում է առաջնային օղակ երեխաների հայտնաբերման և կարիքներին համապատասխան ծառայությունների ուղղորդման համար:

Կատարվածը պատկերացնելի դարձնելու համար կրկին նշեմ, որ 2748 երեխաներ արդեն իսկ ծառայություններ են ստացել 62 կենտրոններում, որից 283-ը հաշմանդամություն ունեցող, 1066 կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող, 1399 խոցելի այլ ընտանիքների երեխաներ:

62 համայնքներում ստեղծվել են ծնողական փոխօգնության խմբեր, որում ներգրավված ծնողներն առավել տեղեկացված են հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների ու նրանց շահերի պաշտպանության ձևերի շուրջ և յուրաքայչուր համայնքի ակտիվ ծնող հադիսանում է այդ համայնքի հաշմանդամություն ունեցող անձի շահերի պաշտպանը:

2011-12 թթ. իրականացվել են բազմաթիվ քննարկումներ և միջոցառումներ, որոնց նպատակն էր հաշմանդամություն ունեցող մարդկանց իրավունքների և խնդիրների մասին հանրությանը տեղեկացնելը, գործընթացին պետական, հասարակական կառույցներին, որոշումներ կայացնողներին մասնակից դարձնելը, հաշմանդամություն ունեցող անձանց լիարժեք ապրելու հարցը բարձրաձայնելը :

Կազմակերպվել են <Մատչելի համայնք>, <Մատչելի Տավուշ> քարոզարշավները, անցկացվել են կլոր սեղան քննարկումներ, հանդիպումներ պետական կառույցների պատասխանատուների հաշմանդամություն ունեցող երեխաների ծնողների և հաշմանդամություն ունեցող անձանց հետ:

Տեղին եմ համարում, որ մենք միասին մեր գոհունակությունը հայտնենք հաշմանդամություն և կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող բոլոր երեխաներին և նրանց ծնողներին՝ արդյունավետ համագործակցելու և այս կարևոր գործին նվիրվելու համար:

Հարգելի տիկնայք և պարոնայք, ներառման գաղափարների տարածման ճանապարհը մենք միասին ենք սկսել, միասին ենք անցնում և միասին ենք հասնելու այն կետին, որտեղ ներառական համայնքի և ներառական մարզի շնորհիվ կունենանք ներառական պետություն, ներառական հայրենիք:

Շնորհակալություն.